Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-770-31.01.2024-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի 22-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի «միայն մեկ ծրագիր» բառերը փոխարինել «առավելագույնը երկու ծրագիր» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ մասով՝

«13. Այն դեպքերում, երբ Հանրային հեռարձակող մեկ կազմակերպություն առանց հեղինակազորման և սլոթի օգտագործման լիցենզիայի հանրային մուլտիպլեքսի միջոցով սփռում է երկու ծրագիր, ապա սույն օրենքով, ինչպես նաև այլ իրավական ակտերով Հանրային հեռաձակողի հաղորդումների նկատմամբ սահմանված հատուկ պահանջները տարածվում են Հանրային հեռարձակողի կողմից երկու տեսալսողական ծրագրերով հեռարձակվող հաղորդումների նկատմամբ ընդհանուր, այլ ոչ թե յուրաքանչյուր տեսալսողական ծրագրի մասով առանձին:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ սլոթի օգտագործման համապատասխան լիցենզիա ունեցող Հանրային հեռարձակողին մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթը 30 օրվա ընթացքում փոխարինվում է հանրապետական սփռում ապահովող սլոթով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի կողմից հեռարձակվող «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագիրը ունի միայն մայրաքաղաքային սփռում, մինչդեռ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի բյուջեի հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն է, ուստի նպատակահարմար է, որպեսզի ծրագիրը հասանելի լինի ՀՀ ողջ տարածքում:

Հաշվի առնելով, որ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով, Ընտրական օրենսգրքով և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով Հանրային հեռարձակողների համար սահմանված են լրացուցիչ պարտավորություններ, ուստի, կարիք կա օրենսդրորեն սահմանելու, որ այն դեպքերում, երբ Հանրային հեռարձակող մեկ կազմակերպություն առանց հեղինակազորման և սլոթի օգտագործման լիցենզիայի հանրային մուլտիպլեքսի միջոցով սփռում է երկու ծրագիր, ապա սույն օրենքով, ինչպես նաև այլ իրավական ակտերով Հանրային հեռաձակողի հաղորդումների նկատմամբ սահմանված հատուկ պահանջները տարածվում են Հանրային հեռարձակողի կողմից երկու տեսալսողական ծրագրերով հեռարձակվող հաղորդումների նկատմամբ ընդհանուր, այլ ոչ թե յուրաքանչյուր տեսալսողական ծրագրի մասով առանձին:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~**Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասում «միայն մեկ ծրագիր» բառերը փոխարինել «առավելագույնը երկու ծրագիր» բառերով:**~~

Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի **22-րդ հոդվածում՝**

3) **3-րդ մասի «միայն մեկ ծրագիր» բառերը փոխարինել «առավելագույնը երկու ծրագիր» բառերով.**

4) **լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ մասով՝**

«13. Այն դեպքերում, երբ Հանրային հեռարձակող մեկ կազմակերպություն առանց հեղինակազորման և սլոթի օգտագործման լիցենզիայի հանրային մուլտիպլեքսի միջոցով սփռում է երկու ծրագիր, ապա սույն օրենքով, ինչպես նաև այլ իրավական ակտերով Հանրային հեռաձակողի հաղորդումների նկատմամբ սահմանված հատուկ պահանջները տարածվում են Հանրային հեռարձակողի կողմից երկու տեսալսողական ծրագրերով հեռարձակվող հաղորդումների նկատմամբ ընդհանուր, այլ ոչ թե յուրաքանչյուր տեսալսողական ծրագրի մասով առանձին:»:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-770-31.01.2024-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին (Պ-770-31.01.2024-ԳԿ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի վերնագրում «Անցումային դրույթներ» բառերը փոխարինել «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին (Պ-770-31.01.2024-ԳԿ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում «պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով.	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին (Պ-770-31.01.2024-ԳԿ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին» բառերը փոխարինել «Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է

		հոդված			
4.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին (Պ-770-31.01.2024-ԳԿ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի 22-րդ հոդվածում՝ 1) 3-րդ մասի «միայն մեկ ծրագիր» բառերը փոխարինել «առավելագունը երկու ծրագիր» բառերով. 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ մասով՝ «13. Այն դեպքերում, երբ Հանրային հեռարձակող մեկ կազմակերպություն առանց հեղինակազորման և սլոթի օգտագործման լիցենզիայի հանրային մուլտիպլեքսի միջոցով սփռում է երկու ծրագիր, ապա սույն օրենքով, ինչպես նաև այլ իրավական ակտերով Հանրային հեռաձակողի հաղորդումների նկատմամբ սահմանված հատուկ պահանջները տարածվում են Հանրային հեռարձակողի կողմից երկու տեսալսողական ծրագրերով հեռարձակվող հաղորդումների նկատմամբ ընդհանուր, այլ ոչ թե յուրաքանչյուր տեսալսողական ծրագրի մասով առանձին:»:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին (Պ-770-31.01.2024-ԳԿ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ	Առաջարկվում է նախագծի վերնագրում «փոփոխություն» բառից հետո ավելացնել «և լրացում» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է